

338 (47.925)

5-98

1928

7643

338(47.925)

Կ-98

С 1930/5877 FEB 20 1931

Պրիշտարներ բոլոր յերկրների միացեք!

ԱՊՐԲԵԶԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


Ա. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ

ԸՆԿ. ՄՈՒՍԱԲԵԿՈՎԻ

ԴԻՄՈՒՄԸ ԱՊՐԲԵԶԱՆԻ ՍՃԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

(ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



338(47.925)
Կ-98

Բազու, 1928 թ.

M
12418



PHOTOGRAPH
STUDIO
NEW YORK
1900



60967.67

ԱՍԽՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. ՄՈՒՍԱԲԵԿՈՎԻ ԴԻՄՈՒ- ՄԸ — ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ- ԹՅՈՒՆԸ—ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵ- ՐԻՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ.

Պորնուրդների վերջնաորոշվածները մի ախպիսի դործ են, վոր սերտ կապ ունի բոլոր աշխատավորների հետ: Վերջնաորոշվածները ամենալավ ձևն են լաշն մասսաներին պետական շինարարության քաշելու համար և խորհուրդների ու ամբողջ պետական ապարատի աշխատանքի ամենահիմնական ստուգումն են:

Մեր պետությունը և պետական վարչության ապարատը հիմնված են միլիոնավոր պրոլետարների ու պրոլետարիատի հետևից գնացող գյուղացիների ինքնագործունեության հիմքերի վրա: Մեր պետական իշխանության ապարատը իր բոլոր ողակներով անմիջապես ձուլվում է նրանց ընտրող մասսաների հետ: Իսկ մասսաների մասնակցությունը պետությունը կառավարելու գործին սկսվում է հենց խորհուրդների ընտրությունից: Պորնուրդների, — վորպես բանվոր-գյուղացիական պետական վարչության որդանների, — դերը և նշանակությունը վորոշում են նաև մեր ընտրական սխեման, վորը հիմնովին տարբերվում է բուրժուազիայի ընտրական սխեմանից:

Հիմնական լոզունգը, վորով պիտի առաջնորդվեն վերջնաորոշվածները, պիտի լինի՝ խորհուրդների ամենամեծ աշխուժացում, նրանց ղեկավար դերի հայտնաբերումը քաղաքի և գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում:

«Պորնուրդների աշխուժացում» լոզունգի հետ ամենասերտ կերպով պիտի կապվի ինքնաքննադատության լոզունգը, վորով հետև առանց ինքնաքննադատության չի ել կարող լինել խորհուրդների իսկական աշխուժացում:

Ազդրեջանում աշխատավորների և մասնավորապես աշխատավոր գյուղացիության կուլտուրական հետաձուգությունն ավելի ուժեղ է զգացվում, քան թե Պորնուրդային Միության վորեկ ուրիշ մասում: մեզ մոտ վերջնաորոշված կամպանիան պիտի լինի մի ուժեղ խթան կուլտուրական հեղափոխության խորացման գործում՝ պիտի վերցրվի թրքուհու չաղրան և բնակչությունն ու

պետական ապարատը գլխավորն ախտի անցնեն թուրքական նոր
այբրենին:

Վերջապես՝ խորհուրդների վերընտրությունները պիտի ա-
վելի ևս ամրապնդեն քաղաքի և գյուղի, չունեորների և միջակ-
ների կապը, վերջնականապես դուրս մղելով կուլակին իրեն դի-
րերից:

Այդ բոլորը կարվի միայն, չեթե ամենաուշագիտ վերաբեր-
մունք լինի դեպի կամպանիան, չեթե կամպանիան տարվի լավ
մշակված ու կազմակերպված, չեթե ընտրող կանայք և տղամար-
դիկ ամենալայն կերպով մասնակից արվեն խորհուրդների և ամ-
բողջ պետական ապարատի հաշվետվության քննությանը և, վոր
ամենագլխավորն է, չեթե վերընտրությունների ամբողջ ընթաց-
քում լայնորեն ծավալվի խորհրդային դեմոկրատիան:

Վերընտրությունների ժամանակ մենք պետք է մեր բոլոր
արածների գումարը տանք, այսինքն թե ինչ աշխատանք են կա-
տարել մեր պետական որդանները: Այժմ խոսենք այդ մասին,
թե մենք ինչ ենք արել՝ արդյունաբերության, գյուղատնտեսու-
թյան, ժողովրդական կրթության, առողջապահության, տուրքա-
յին գործի զարգացման վերաբերմամբ և այլն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՅՈՒՂԱ- ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ազրբեջանի խորհրդայնացման մոմենտից սկսվել է գյուղա-
կան տնտեսության բոլոր ճյուղերի, մասնավոր դաշտային մշա-
կույթի արագ լայնացումը: Սկզբնական ժամանակի այդ բուռն
աճումը այժմ դանդաղանում է: Դրա փոխարեն սկսվում է
գյուղատնտեսության վորակական լավացումը, այսինքն՝ տեխնի-
կայի բարձրացումը, նոր կուլտուրաների զարգացումը և այլն:

1921 թվից մինչև 1925 թվը Ազրբեջանի ցանքսերի տա-
րածությունը հասնում է նախապատերազմական չափին՝ 500,000
հեկտարի, այսինքն նախապատերազմական չափից 80%-ով ավելի:
Այդպիսով առաջին չորս տարիների ընթացքում ցանքսերի տա-
րածությունն ավելացել է 90%-ով (համարյա չերկու անգամ),
իսկ վերջին 4 տարիների ընթացքում միայն 7%-ով, այսինքն
աճումը դանդաղացել է 13 անգամ:

Բոլորովին ուրիշ պատկեր է պարզվում, չեթե մենք դիտում
ենք դաշտային մշակույթի ընդհանուր սիստեմի առանձին կուլ-
տուրաների փոխարարություններն այդ տարիների ընթացքում:
Խորհրդայնացումից հետո առաջին չորս տարիների ընթացքում
տեխնիքական և ինտենսիվ (աշխատանք կլանող*) կուլտուրանե-
րը, որինակ՝ բամբակը, կանեֆը, բրինձը և այլն, — դաշտային
մշակույթի 10—12 առկոսն են կազմում, իսկ հետագա չորս տա-
րիներում այդ արժեքավոր կուլտուրաները կազմում են 25—27
առկոս: Այդ ցանքսերի տարածությունը մեծացել է չերեք ան-

* Աշխատանք կլանող — վոր գործի է քաշում մեծ քանակությամբ աշխա-
տող ձեռքից:

գամից ավելի, այն ինչ ցանքսերի ընդհանուր տարածությունն
այդ տարիների ընթացքում ընդամենը 7-8% է ավելացել:

Այդպիսով տեխնիքական և ինտենսիվ կուլտուրաների ա-
ճումը վերջին տարիների ընթացքում չորս անգամ մեծ է չերեք
ցանքսերի ընդհանուր տարածության աճումից: Դա նշանակում
է, վոր մեր գյուղացին սկսել է լավացնել իր տնտեսությունը վո-
րակի կողմից՝ դաշտային մշակույթների մեջ մտցնելով ավելի ու
ավելի արժեքավոր և արդյունք տվող կուլտուրաներ:

ԲԱՍԲԱԿ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ- ՆԵՐ

Մյուս տեխնիքական կուլտուրաների մեջ առանձնապես մեծ
նշանակություն ունի բամբակը: Ազրբեջանի խորհրդայնացման
մոմենտին այդ կուլտուրան համարյա վոչնչացել էր, իսկ այժմ
բամբակի ցանքսերի տարածությունն արդեն անցել է նախապա-
տերազմական չափից, կառավարությունն էլ ամեն միջոց ձեռք է
առնում բամբակի ցանքսերն ավելի ընդարձակելու համար:

Տեխնիքական կուլտուրաների (կանեֆ, բամբակ, բրինձ և
այլն) աճումը բավական բարձրացնում է դաշտային մշակույթի
ամբողջ արտադրանքի արժեքը: 1921 թվին դաշտային մշակույ-
թի արտադրանքի արժեքը հավասար է չերեք 25 միլիոն նախա-
պատերազմական բուրլու, իսկ 1928 թվին նա արդեն հասել է
85 միլիոն նախապատերազմական բուրլու: Դրա հետ միասին
տարեց տարի աճում է գյուղական տնտեսության ապրանքայնու-
թյունը: Այսպես՝ 1925 թվին գյուղացու շուկա դուրս բերած դաշ-
տային մշակույթներից ստացած մթերքների արժեքը չերեք է 10
միլիոն բուրլի, իսկ 1928 թվին դարձել է 32 միլիոն բուրլի,
այսինքն 3 անգամից ավել շատացել է: Յեթե այդ թվերը ռա-
ժանենք առանձին տնտեսությունների, դուրս կգա, վոր ամեն
մի գյուղացի ավել անտեսություն է դաշտային վեր-
ջին չերեք տարիներում ստացած ընդհանուր ար-
դյունքը (միջին հաշվով) աճել է համարյա չերկու
անգամ:

Խաղողի մշակույթը և այգեգործությունը, վոր պատերազմի
տարիներում սաստիկ կրճատվել էին, ներկայումս վոչ միայն հա-
սել են մինչպատերազմական չափին, այլ և զգալիորեն անցել են
այդ չափից՝ թե տված արդյունքի և թե բերքատվության կող-
մից:

Բամբարաբուծությունը նույնպես աճում է տարեցտարի,
կազմվել են բանջարեղենի արտադրական — արտելային հատուկ
ոպոններ, մտցնելով գործի մեջ գյուղատնտեսական (ազրոնո-
միական) բարելավում:

Վերջին տարիներում խիստ ընդարձակվել է խոտացանքսե-
րի տարածությունը: Այդ ընդարձակումը ամուր հիմքեր է ստեղ-
ծում անասնապահությունն ուղիղ գնելու համար:

Անասնաբուծության գործում մենք աշխատում ենք լավաց-
նել անասունների ցեղերը՝ ստեղծելով ազնիվ ցեղերի բուծարա-
ններ, լեռնային ֆերմաներ, բեղմնավորման կետեր, անասնաբու-
ժական կոոպերատիվ և կոլեկտիվ միություններ:

Բավական աճել է նաև շերամապահությունը, վոր վերջին
տարիների ընթացքում շատ մոտեցել է նախապատերազմական

ՑԱՆԲԱՏԵՐԸ ՅԵՎ ԲԵՐԲԸ

ԱՆԱՏՆԱԲՈՒ- ԾՈՒԹՅՈՒՆ

չափին: Այստեղ մենք ունենք հսկայական նվաճումներ. մեր պետական հնդակայաններն այժմ պատրաստում են սեփական շերամի հուսեղ աչն չափով, վոր լիովին բավարարում է Ադրբեջանի շերամապահության կարիքները:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՈՐՆԵՐՆԵՐ ՏԵՍԱԿԱՆ ՈԳ- ՆՈՒԹՅՈՒՆԸ

Սորհրդային Ադրբեջանում ներկայումս գործում են 15-ից ավելի փորձնական հիմնարկներ և մոտ 1000 զավառական և զավառակային գյուղատնտեսներ և կենդանատեսիկներ: Փորձնական հիմնարկները, վոր ուսումնասիրում են բերքատվության բարձրացման միջոցները և սերմերի ու արտադրանքի լավագույն տեսակներ ստանալը, ներկայումս աչն արդյունքին են հասել, վոր, որինակ, նրանց հացահատիկները հեկտարին տալիս են 300 փուլ, իսկ բամբակը—200 փուլից ավելի: Այդ բոլոր նվաճումները հետո աստիճանաբար տեղափոխվում են գյուղացիական տնտեսությունները և կոլտոգները, ուր ամեն տարի կազմակերպվում են 2,000-ից ավելի ցուցական ցանքսեր և արվում են 1000-ավոր գրուցներ՝ ավելի լավ հողագործական տեսիկային անցնելու մասին:

ՀՈՂԱՇԻՆԱՐԱ ՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎԵՐԱ- ԲՆԱԿԵՅՈՒՄԸ

Այդպիսի բարելաված տեսիկային ամբողջովին անցնելու համար անհրաժեշտ է հողը լավ բաժանել, աչնպես վոր ամեն մի գյուղացի իմանա, թե ինչպիսի հողամաս է գտնվում իր ձեռքին: Այդպիսի հողաբաժանում մինչև 1926 թիվը կատարվել է 1790 հողային համայնքներում՝ 1,813,000 հեկտար ընդհանուր տարածությունը: 1928 թվին կազմակերպվել է 431 հողային համայնք 430,000 հեկտար տարածությամբ: Առանձին գյուղացիների հողաշինարարության հետ միասին վերջին տարիներս մեծ ուշադրություն է դարձվել կոլեկտիվ տնտեսություններին հող տալուն: Վերջիններից 130-ը հողաշինարարության են արժանացել:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵ ՍԱԿԱՆ ՎԱՐԿԸ

Գյուղատնտեսական ոգնություն շրջանում ձեռք առած միջոցներից հիմնականը գյուղացիներին վարկ տալն է՝ դանազան տնտեսական կարիքների համար:

Վերջին 3 տարիներում գյուղ է ուղարկված 15 միլիոն բուրլի՝ գյուղացիներին գյուղատնտեսական վարկ տալու համար: Այդ միջոցները բաժանվել են գյուղացիներին իբրև փոխառություն: Գյուղացիներին ամենից շատ վարկ է տրվել (60%) լրծական, մեքենաներ և գործիքներ, արակտորներ գնելու, գյուղական տնտեսական շենքեր, ջրմուղներ և քահրիզներ շինելու համար: Այդ տարիների ընթացքում գյուղ են ուղարկվել՝ 23,000 չերկաթե գութան, 4,000 չերկաթե ցաքան, 1,000 սերմնացան, 800 հնձող մեքենա, 250 կալսիչներ, 1,800 սերմագտիչ և 451 տրաքտոր: Վարկի մնացած մասը տրված է իբրև ոգնություն կոլեկտիվ արտադրական միություններին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵ ՍԱԿԱՆ ԿՈՈ- ՊԵՐԱՅՈՒՆ

Գյուղատնտեսական կոոպերացիան Ադրբեջանում գոյություն ունի 1924 թվից: Առաջին շրջանում կոոպերատիվ կազմակերպությունները հազիվ կարողացան մեծ դժվարությամբ կազմակերպել միայն 70 կոոպերատիվ: Դրանք գլխավորապես գյուղատնտեսական վարկային ընկերություններ էին: Այդ կոոպերատիվները շատ թույլ էին, հազիվ սկսել էին աշխատել: Նրանց գործիչները շատ դեպքերում անգրագետ մարդիկ էին, չէին իմա-

նում ինչից սկսել: Այժմ գրությունը բոլորովին ուրիշ է: Այժմ մենք արդեն ունենք 422 կոոպերատիվ: Նրանց մեծ մասը հատուկ կոոպերատիվներ և արտելներ են (287 հատ), իսկ փոքր մասը—գյուղատնտեսական վարկային ընկերություններ (135): Հատուկ նպատակի կոոպերատիվներ և արտելները կազմակերպվում են նրա համար, վոր զարգացնեն բարձր կուլտուրաները՝ բամբակ, բրինձ, կանեֆ, բոժոժ և աչն: Արտելները և կոլտոգները կազմակերպվում են նրա համար, վոր գյուղացուն վարժացնեն կոլեկտիվ և նրա համար ձեռնտու աշխատանքի:

1924 թվին ունենալով 70 կոոպերատիվ մենք ծառայում էինք 13,000 տնտեսություններից վոչ ավելի: Այժմ մենք ունենք արդեն 143,000 կոոպերացված գյուղացիական տնտեսություններ: Մեր հանրապետության մեջ ընդամենը 350 հազար տնտեսություն կա: Նշանակում է տնտեսությունների մոտ 40 տոկոսը մտնում է գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի մեջ: Հատուկ նպատակի կոոպերատիվներում (բամբակային, աչգեգործական, կաթնատնտեսական) 1926 թվին մենք ունեինք 12,000 կոոպերացված տնտեսություն: Այժմ ունենք 41,000 տնտեսություն, վորոնք իրենց գործերը տանում են կոոպերացիայի միջոցով: Մանավանդ արագ է մեծանում գյուղացիական տնտեսությունների թիվը, վորոնք կազմակերպված են արտելներում և կոլտոգներում: Վերջիններս չերկու տարի առաջ իրենց շարքերում ունեին ընդամենը 350 տնտեսություն: Այժմ արտելներում կա արդեն 5,300 տնտեսություն: Կոոպերացման գործը բոլոր զավառներում միատեսակ չի գնում: Կոոպերացման գործում առաջին տեղն են բռնում Ադրամի գավառը (55%), Նախկրայը, Ղարաբաղը, զեռես թույլ են կոոպերացված Գուրգիստանի գյուղացիական տնտեսությունները (9%):

Ադրբեջանի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում չքավորության կոոպերացմանը և նրա տնտեսական կարիքների բավարարմանը:

Վերջին չերկու տարվա ընթացքում պետությունը տվել է 70,000 բուրլի՝ ոգնելու, վոր չունեորները մտնեն կոոպերացիայի մեջ: Մոտակա 2—3 տարվա ընթացքում մենք պետք է բոլոր չքավորներին գյուղատնտեսական կոոպերացիայի անդամ դարձնենք: Յերկար ժամանակով վարկերը այժմ առաջին հերթին ստանում են չունեորները: Այդ վարկերը գործադրվում են ձիեր, չեզներ, հարկավոր ինվենտար և ուրիշ բաներ առնելու համար: Մեր կոոպերացիան իրա աշխատանքը տանում է աչնպես, վոր նրա 100 անդամից 95-ը չունեորներն ու միջակներն են և միայն 5-ը—կուլակները: Այդպիսով ամբողջ գյուղատնտեսական կոոպերացիան գտնվում է միջակների և չունեորների ձեռքին: Այժմ արդեն մեր գյուղացիները չեն գնում փող պարտք անելու գյուղի հարստից. նրանք գնում են իրենց կոոպերատիվը, ուր և 0%-ն է քիչ և փոխառություն ժամանակը չերկար: Ինչպես հայտնի է գյուղացիներին՝ գյուղի վարկերի ամբողջ բաժանումը այժմ գտնվում է գյուղատնտեսական կոոպերացիայի ձեռքին:

Դժբախտաբար, մեր գյուղատնտեսական կոոպերացիայի շարքերում գտնվում է գյուղացիական տնտեսությունների միայն

1/3 մասը: Սակայն մոտակա հնգամյակի ընթացքում ծրագրված է վարկային կոոպերացիայի մեջ առնել Ադրբեջանի բոլոր տնտեսությունների 70 տոկոսից վոչ պակաս: Դա կնշանակի, վոր համարյա ամբողջ գյուղացիությունը կսկսի իր տնտեսությունը տանել վոչ թե բաժան-բաժան, այլ կոոպերատիվ միացությունը: Դա նշանակում է, վոր կոոպերատիվների միջոցով գյուղացիությունը կստանա վարկերը, սերմացուն, մեքենաները, պարարտանյութերը և կոոպերատիվների միջոցով նա կվաճառի իրա գյուղատնտեսական արտադրանքը՝ քաղաքին, պետությունը և ազգաբնակչությանը: Դա, վերջապես նշանակում է, վոր մեր գյուղի ամբողջ տնտեսական կյանքը պիտի տարվի պլանով, կազմակերպված ձևով՝ կոոպերացիայի միջոցով:

ԿՈՆՍՈՋՆԵՐԸ

Սակայն չես պետք է նշեմ, վոր մեր գյուղացիների հսկայական մեծամասնությունը առաջիմ իրա տնտեսությունը տանում է առանձին. ամեն մեկն աշխատում է իրա համար ձեռք բերել առանձին լծկան, հարկավոր ինվենտարը և առհասարակ տանել իրա տնտեսությունն անկախ, ուրիշներից առանձնացած: Այդպիսի ցրվածությունը, իրարից ջոկ-ջոկ լինելը շատ ֆևսներ է տալիս գյուղական տնտեսությանը: Առանձին տերը, շնորհիվ այդպիսի առանձնացմանը, հազիվ է ծածկում իր ծախսերը: Իհարկե, այդպիսի փոքր տնտեսությունը շատ չի կարելի բաժան-բաժան անել:

Ներկայումս (Ադրբեջանի Կոնսոյուկի տվյալներով) մեր գյուղացիական տնտեսությունների 80%-ը մանր և մանրագույն է. դրանք լծկան կամ բոլորովին չունեն, կամ ամեն մի տնտեսությունը 1—2 գլուխ ունի: Այդպիսի տնտեսության տարեկան ամբողջ չեկամուտը չի անցնում 400 բուրբույց:

Ընկերներ, չեթե մենք այնքան հարուստ լինելիք, վոր կարողանայինք այդ բոլոր մանր տնտեսություններին մեքենաներ տալ, դա բնակչությանն այնքան էլ մեծ ոգուտ չեր տա. այդ մեքենաները լիովին աշխատանք չեին ունենա, ուրեմն և արդյունավետ չեին լինի: Կարիք չկա ապացուցելու, վոր առհասարակ մանր տնտեսությունը ձեռնառ չէ: Այդ դրության միակ լծկն է՝ գյուղացիական տնտեսության խոշորացումը՝ մանր և չեղքն և գյուղացիական տնտեսությունները միացնելու և մանրագույն գյուղացիական տնտեսությունները միացնելու և կոլլեկտիվ դարձնելու միջոցով, ստեղծելով ընդհանուր տնտեսություններ, հողը միասին մշակելու ընկերություններ և արտելներ: Այդպիսի միացած տնտեսություններն ունենալով մեծ ցանք-սալին տարածություն՝ կարելի է սարքավորել լավ ինվենտարով, տրակտորներով, լծկաններով. այստեղ կաշահանջվի ավելի քիչ մեքենա, վոր և լիովին—100%-ով կոգտագործվի: Մեր գյուղացիությունը սկսել է հասկանալ այդպիսի միացումների ոգտակարությունը և նա տարեցտարի ավելի ու ավելի է ձգտում դեպի կոլլեկտիվները: Այսպես, չեթե 1925 թվին խորհրդային Ադրբեջանում կար միայն 22 կոլխոզ, 1928 թվին արդեն 400 կոլխոզ կամ մոտ 7,000 անդամով և 25,000 հեկտար ցանքսով: Անցած 3 տարում կոլխոզների վրա ծախսվել է մոտ 3 միլիոն բուրբույ (փողով, տրակտորներով, մեքենաներով, սերմերով): Ներկայումս

կոլխոզների ամբողջ աշխատանքը ղեկավարում է հատուկ «կոլխոզցենտրը», վորն ունի իր հրահանգիչները և գյուղատնտեսները:

Մոտակա 5-ամյակում կոլխոզների թիվը ծրագրված է հասնելու 3,000-ի՝ 400 հազար հեկտար ցանքսերով:

Չեռք առած այդ բոլոր միջոցների շնորհիվ մեր գյուղացիական տնտեսությունը հսկայական չափով առաջ կգնա: Նա կըսկսի արագ բարձրանալ և կգնա սոցիալիզմին և կոմունիզմին տանող ճանապարհով:

ՄԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանը գլխավորապես գյուղատնտեսական չերկիր է: Մեր հիմնական հարստություններն են՝ հացահատիկները, անասունները, բրինձը, բամբակը և ուրիշ գյուղատնտեսական մթերքները: Հանրապետության լեռնարդյունաբերությունը, վոր մեծ ապագա է խոստանում, առ այժմ քիչ է զարգացած: Դրանից պարզ է, վոր պետության գյուղին վերաբերող գլխավոր հոգսը կաշանում է գյուղական տնտեսության բարձրացումը և լավացումը: Լավ արդյունքներ ստանալու և գյուղացուն անհրաժեշտ գիտելիքները տալու համար պետք է հրաժանվենք գյուղատնտեսության գիտությունը (ագրոնոմիան): Այդ նպատակով խորհրդային կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսական հիմնարկների լաշնացմանը, գյուղացիներին սերմեր և մատակարարում, սերմագույն կաշաններ և հիմնում, միջոցներ և ձեռք առնում ջրելու մեր ընդարձակ դատարկ տափաստանները, վոր այնտեղ սակավահող գյուղացիներին տեղավորել և ալն: Այդ բոլոր միջոցներն իրագործելու համար հարկավոր է դեռ շատ տարիների ընթացքում ծախսել մեծ միջոցներ:

Խորհրդային իշխանությունն իմանալով, վոր առաջ, մինչև հեղափոխությունը Ադրբեջանի վրա վոչ մի ուշադրություն չեր դարձվում, այժմ իրա պարտականությունն է համարում, խոշոր միջոցներ տալ ժողովրդական տնտեսության բարձրացման համար: Այնուամենայնիվ պետությունն այնքան հարուստ չէ, վոր իր միջոցներով՝ ծախսերը ծածկի. անհրաժեշտ է, վոր գյուղացիությունը վորոշ հարկեր վճարելով՝ ալք ծախսերի մի մասը վերցնի իրա վրա: Գյուղացիների մտքած բոլոր գումարները լիովին մնում են տեղում և ծախսվում են գյուղացիական տեղական կարիքները բավարարելու համար:

Քաղաքացիական կովի ընթացքում և նրան ուղեկցող ընդհանուր քայքայումի շնորհիվ խորհրդային իշխանությունը ստիպված էր բնատուրք վերցնել՝ բանակը և ազգաբնակչությունը կերակրելու համար:

Հենց առաջին հնարավորության դեպքում այդ հարկի ծանրությունը թեթևացրվեց: Չնայած պետական գանձարանի ծանր դրությունը 1922 թ. խորհրդային կառավարությունը սկսել է արտոնություններ տալ չքավորագույն գյուղացիությանը:

ԲՆԱՏՈՒՐԲ— ՊԱՐԵՆՏՈՒՐԲ

**ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵ
ՍԱԿԱՆ ՀԱՐԿ**

Աչքի առաջ ունենալով, վոր ծանր և հարկը բերքով տալ, 1925 թվից սկսած գյուղացիները վրա դրվեց միասնական գյուղատնտեսական հարկը, վորը գանձվում է միայն փողով:

Այդ հարկը մտցնելիս խորհրդային իշխանությունը ձգտում էր, վոր չունենոր և սակավակարող տնտեսություններին ընկնող վճարումները հնարավորության չափով իջեցվեն, և հարկի ծանրությունն ընկնի գյուղացիության ավելի հարուստ խավերի վրա: Հարկի անձիշտ բաժանումից խուսափելու համար, հարկը սկսեց դրվել վոչ թե վարելահողի համեմատ, այլ ցանքախ:

Հետո, տարեցտարի սկսեցին շատանալ չքավոր և սակավակարող տնտեսություններին տրվող ուրիշ արտոնությունները: Համաձայն Ադրբեյջանի Կոմիտեի 3-րդ նստաշրջանի վերջին միջակ և բազմադամ ընտանիք կերակրող տնտեսությունների հարկերն իջեցվում են: Բացի այդ հարկից ազատվող սակավակարող տնտեսությունների թիվը վերջին տարիների ընթացքում 3 անգամ ավելացել է (1924—25 թվին գյուղատնտեսական տուրքից ազատվել է տնտեսությունների 160/0, իսկ 1928—29 թվին Ադրբեյջանի բոլոր չունենորների տնտեսությունների 460/0-ը):

**ԻՆՔՆԱՏՈՒՐ-
ՔԱՎՈՐՈՒՄ**

Վորովհետև պետությունը լարելով իր բոլոր միջոցները՝ աշխուժեցնելով չի կարողանում բավարարել միանգամից բնակչության բոլոր կարիքները, դրա համար էլ այս տարի մտցրվել է ինքնատուրքավորման որենքը: Վերջինս թուլատրվում է բացառապես գյուղացիների կուլտուրական և տնտեսական կարիքները բավարարելու համար, միայն այն գյուղի համար, վորտեղ տուրքը հավաքվում է:

Ինքնատուրքավորման որենքն այնպես է կառուցված, վոր տուրքերը լինեն գյուղատնտեսական, չեկամտային և զբաղմունքային հարկերի համեմատական չափով: Հետևաբար ուժեղ տրտեսությունները ավելի մեծ չափով են չենթարկվում ինքնատուրքավորման, վորովհետև դրանք հարկերի ավելի մեծ գումարների են վճարում: սակավակարողներն ոգտվելու են վճարման արտոնություններից: Բացի այդ, որենքի համաձայն գյուղական ժողովը իրավունք ունի ինքնատուրքավորումից բոլորովին ազատելու շատ սակավակարող տնտեսությունները և չքավոր տնտեսությունների վճարման ձևը փոխել, որինսկի անձնական աշխատանքով, կառուցման նյութեր մատակարարելով և այլն:

Այդպիսով դասակարգային սկզբունք դնելով տուրքային քաղաքականության մեջ, հարկից բոլորովին ազատելով կամ թույլ հարկադրելով չքավոր և սակավակարող բնակչությանը, խորհրդային իշխանությունն անցած տարի հնարավորություն է ունեցել բնակչության սոցիալական-կուլտուրական կարիքների վրա ծախսելու (ժողովրդական կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) 25 միլիոն բուբլի: Ադրբեյջանի ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերը զարգացնելու համար տրվել է 30 միլիոն բուբլի: Ներկա տարում այդ կարիքների համար չենթադրվում և տալ էլ ավելի խոշոր միջոցներ:

Կուլտուրական կարիքների և ժողովրդական տնտեսության բարձրացման համար տրված նպաստների այդպիսի լայն թափը հնարավոր է միայն իրագործելով այն սկզբունքները, վորոնցով ղեկավարվում է խորհրդային իշխանությունը ֆինանսական հարցերում:

**ԻՆՉ Ե ԱՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒ-
ԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ**

Խորհրդային Միության մեջ ժողովրդական կրթությունն այնպես է կառուցվում, վոր նրա բոլոր աստիճանները բոլորի համար մատչելի են և ստորին աստիճանի դպրոցից հետևյալ վերին աստիճանն անցնելը կատարվում է անարգել: Դրա համար էլ մեր դպրոցը կոչվում է միասնական աշխատանքի դպրոց:

Նախադպրոցական կրթությունն Ադրբեյջանում նոր գործ է. դրա համար էլ նախադպրոցական դաստիարակության ցանցը մեզ մոտ դեռ թույլ է զարգացած, մանավանդ գյուղում: Նախադպրոցական դաստիարակության նշանակությունը կայանում է նրանում, վոր նա ազատում է աշխատավորուն—մորը չեքեխաներին դաստիարակելու հոգսից և դաստիարակության գործը տալիս է հատկապես պատրաստված աշխատողների ձեռքը: Դրա շնորհիվ չեքեխաները ստանում են ավելի ուղիղ սկզբնական զարգացում, նրանց մեջ զարդանում են աշխատանքային, հասարակական, կուլտուրական և առողջապահական սովորույթները:

Նախադպրոցական դաստիարակությունը հսկայական նշանակություն ունի մեր կենցաղը փոխելու համար. Լուսծողի մատը վերջին ժամանակներս լուրջ ուշադրություն է դարձրել այդ հիմնարկների ցանցը լայնացնելուն՝ կոլխոզների, սովխոզների կից և այլն: Նախադպրոցական հիմնարկների թիվը գյուղում կազմում է դպրոցների ընդհանուր թվի մեկ չերորդական մասը: Սկսված է թրքուհիներից նախադպրոցական մասնագետներ պատրաստելու գործը: Այստեղ պիտի ասել, վոր նախադպրոցական գործը կարող է զարգանալ միայն այն դեպքում, չեթե նա նյութական միջոցներ ստանա վոչ միայն պետական բյուջեից, այլ և լայն խորհրդային հասարակայնությունից:

Աշխատավորական դաստիարակության հիմնական բաղա և հանդիսանում առաջին աստիճանի դպրոցը: Ընդհանուր պարտադիր ուսում մտցնելուց հետո՝ այդ դպրոցի առաջ մեծ խնդիրներ են դրվում, վոր շատ է տարբերվում հին դպրոցի պահանջներից: Մեր դպրոցի նպատակն է չեքեխաներին դաստիարակել աշխատանքային փողով, նրանց նախապատրաստել ապագա գործունեության համար ու նրանցից սոցիալիստական կառուցողներ պատրաստել: Նա աշակերտին ծանոթացնում է տնային, արհեստային, արդյունաբերական ու գյուղատնտեսական աշխատանքի հիմնական տեսակների հետ, նայած տեղի պայմաններին: Մեր տնտեսության զլխավոր ճյուղն է հանդիսանում գյուղական տրտեսությունը: Ուստի Լուսծողի մատն աշխատելով աշակերտներին սովորեցնել գյուղական տնտեսությանը՝ բոլոր միջոցները

**ՆԱԽԱԴՊՐՈ-
ՑԱԿԱՆ ԿՐ-
ԹՈՒԹՅՈՒՆ**

**ԱՍՏԻՃԱՆԻ
ԴՊՐՈՑԸ**

ձեռք ե առնում, վոր գլուղական դպրոցներն իրանց հողամասերն ունենան: Այդ հողամասերը հրաշալի դպրոցներ կհանդիսանան աշակերտների համար, վորտեղ նրանք կգաստարակվեն ապագա աշխատանքի համար:

Կանանց վերաբերմամբ լեղած հին հայացքի դեմ մղվող պայքարում մեծ նշանակություն ունի դպրոցում միատեղ (աղջիկների ու տղաների) կարգալը: Դպրոցը նույնպես կոխվեց և սկսում հին կենցաղի մնացորդ չաղբալի ու փափախի դեմ: Այդ կովում մենք հենվում ենք Ադրբեջանի աշխատավոր գյուղացիության գիտակից տարրերի ոգնություն վրա:

Անցյալ տարի լուրջ ուշադրություն ե դարձրված ֆիզիկուլ-տուրալի դասավանդումը բարելավելու վրա: Մենք պետք ե առողջ ուժեղ, կենսուրախ չերիտասարդություն կրթենք: Բացի դրանից՝ դպրոցում ֆիզիկուլտուրան պատշաճ կերպով դնելը մարտիկների հզոր կազմեր կպատրաստե Միություն թշնամիների դեմ:

Մեր դպրոցում դասավանդման լեզուն չուրաքանչյուր ազգության համար իր մայրենի լեզուն ե: Ներկայումս Ադրբեջանի դպրոցներում դասավանդումը տարվում ե 9 լեզվով (թուրքերեն, հայերեն, ռուսերեն, գերմաներեն, փղզալի թաթարերեն, վրացերեն, հրեկերեն, հունարեն ու ասորերեն): Դեռ իրանց սեփական այբուբենը չունեն քրդերը, թալիշները, լեզգիները: Նրանց համար այբուբեն ստեղծելու հարցը հերթի ե դրված:

Ադրբեջանի աշխատավորները լիովին թուրքերեն նոր այբուբենին անցնելու գործում մինչև այժմ դիմադրություն են հանդիպում հոգևորականության ու հակախորհրդային տրամադրության ունեցող ինտելիգենցիայի կողմից: Իսկ խորհրդային կառավարությունը թուրքերեն նոր այբուբենն անպայման անհրաժեշտ գտնելով՝ վորպեսզի բարձրացնվի Ադրբեջանի կուլտուրական մակարդակը, բոլոր ջանքերը գործադրում ե, վոր այբուբենն մտցնելն անպայման անհրաժեշտ գտնելով՝ վորպեսզի բարձրացնենք Ադրբեջանի կուլտուրական մակարդակը, բոլոր ջանքերը գործադրում ե, վոր ինչ կերպ ել լինի՝ անգրագիտությունը վերացնե թուրքերեն նոր այբուբենով: Այդ նպատակով դեկրետ ե հրատարակված, վորի համաձայն բոլոր աշխատավորները բոլոր գավառներում, բոլոր գաղթաներում, գյուղերում մինչև 1928 թվի հունվարի 1-ը իրանց անգրագիտությունը կվերացնեն թուրքերեն նոր այբուբենով:

Վճռականորեն թուրքերեն նոր այբուբենին անցնելը չերիտասարդության շատ ուժեղ կխնայի, վոր առաջ գուր տեղից գործադրվում եր արաբերեն շատ դժվարին այբուբենը չուրացնելու համար: Ադրբեջանի կառավարությունը հավատացած ե, վոր խորհրդային ստորին աղարատի, գավառական կազմակերպությունների ու ամբողջ աշխատավոր բնակչության ամենամոտ աջակցությամբ կարելի կլինի անգրագիտությունը լիկվիդացիայի չենթարկել թուրքերեն նոր այբուբենով: Ներկայումս կուլտուրական հեղափոխության այդ հիմնական խնդիրը հաջող կերպով իրագործելը մեզ հնարավորություն կտա ավելի սերտ կերպով կապվելու հարևան կուլտուրական հանրապետություններին:

ԳՅՈՒՂԱՅԻՆ-ԿԱՆ ՅԵՐԻՏԱ-ՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ

Գյուղերում կարգացնելու հետագա ետապն ե հանդիսանում գյուղացիական չերիտասարդության դպրոցն ու գյուղատնտեսական թեքում ունեցող յոթնամյակները: Գյուղացիական չերիտասարդության դպրոցը—դա դպրոցի մի նոր տեսակն ե, վորն Ադրբեջանում ընդամենը չերկու տարի ե, ինչ գոյություն ունի: Այդ դպրոցի նպատակն ե՝ չերկրում գյուղական տնտեսությունը բարձրացնելու համար գիտելիքներով զինված գյուղատնտեսական գործիչ-կոլլեկտիվիստի ու գյուղում սոցիալիստական շինարարության մարտիկի նոր տիպ ստեղծել: Այդ դպրոցը վերջացնելով, աշակերտը կարող ե մտնել գյուղատնտեսական տեխնիկում:

II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑ

Ժողովրդական կրթության հետևյալ աստիճանը մեզ մոտ II աստիճանի դպրոցն ու արհեստակցական տեխնիկումներն են հանդիսանում: Թե մեկը ե թե մյուսը նախադրու են ծառայում դեպի բարձրագույն դպրոցները, վորոնք արդեն մեր գյուղատնտեսական ու արդյունաբերական արտադրության համար հրամայնատարական կազմ են պատրաստում: Մենք պետք ե տեխնիկումների ու բարձրագույն դպրոցների աշակերտական կազմը լրացնենք գյուղացիների ու բանվորների չերխաններով: Յուրաքանչյուր տարի աչնտեղ ավելացվում ե գյուղացիական չերխանների 0/0-ը:

Անցյալ տարվանից սկսած II աստիճանի դպրոցին արտադրական թեքում ե տրված: Այդ դպրոցն այժմ բաց ե թողնում միջին պատրաստություն ունեցող կոոպերատորներ, հաշվառարներ, փձակագրողներ, I աստիճանի դպրոցի ուսուցիչներ, գյուղ-խորհուրդների, գաղթաների, գավգործկոմների քարտուղարներ ե այլն:

Ահրաժեշտ ե, վոր գյուղացիությունն իր չերիտաներին, առանձնապես աղջիկներին տար ե հատուկ մանկավարժական կրթություն:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԴԱՏՐԱՍՏԵԼ

I աստիճանի դպրոցների ուսուցիչ պատրաստելու համար գոյություն ունեն մանկավարժական տեխնիկումներ, վորոնց սարքավորման համար Լուսժողկոմատի կողմից ներկայումս ամենալուրջ ուշադրություն ե դարձրված: Նույնպես կուրսեր են կազմակերպված ուսուցիչներ վերապատրաստելու համար:

Մանկավարժական տեխնիկումների ուսումնական պլաններն ու ծրագրերը գյուղատնտեսականացրած են, վորպեսզի աչնտեղ ավարտողները կարողանալին գյուղատնտեսական թեքում ունեցող աշխատավորական դպրոցներ հիմնել: Պատշաճ պատրաստություն չունեցող ուսուցիչների համար մենք վերապատրաստվելու կուրսեր ենք կազմակերպել աչն հաշվով, վոր 4 տարվա մեջ կարողանան մանկավարժական տեխնիկումի լրիվ կուրսն անցնելու: Չափ սահմանված ե չեղել 600 հոգի: Մյուսների համար կազմակերպված ե չեղել ուսուցում ի բացակայություն (զանչույե)՝ այսպես կոչված «տնային մանկավարժական տեխնիկում Հոկտեմբերյան Հեղափոխության X-ամյակի անվան»:

ԹՈՒՐԿԵՐԵՆ ՆՈՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

**ԴՊՐՈՑԱԿԱՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒ-
ԹՅՈՒՆ**

Ընդհանուր ուսումնական մասնակցություն հետևանքով՝ աճում է դպրոցական շինարարությունը: Կառավարությունը հսկայական ծախսեր է անում դպրոցներ հիմնելու վրա: Անհրաժեշտ է, վոր գյուղացիությունն էլ այդ գործում ոգնություն հասնել՝ իր գյուղյն ինքնատուրքավորման լինթարկելով կուլտուրական կարիքների համար:

**ՊԵՏՈՒՆՈՒԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆԲ**

Կուլտուրական աշխատանք է տանում նույնպես և մտավոր-հետամնաց, դժվար-դաստիարակելի, պակասավոր, կուլը ու խուլ չերեխաների, ինչպես և իրավունք խախտող ու անխնամ չերեխաների վերաբերմամբ: Այդ նպատակին են ծառայում մանկատները, Դուսարի (Դուբայի գավառ) աշխատանքային գյուղատնտեսական դպրոցը և գիշերօթիկ ոժանդակ դպրոցը: Անհորմալ չերեխաներին ուսումնասիրելու համար Բաղխուրհրդի ժողովրդական կրթություն բաժնի կից հոգեբանական լաբորատորիա կա:

**ՓԱՐՋԱՎՈՒՆ-
ՆԵՐ**

Ագրբեջանում արհեստակցական ստորին կրթությունը տարվում է ֆարրիկա-գործարանային աշակերտության, արհեստային դպրոցների ու հասակավորների կուրսերի գծով: Դպրոցների նոր տիպ են հանդիսանում ֆարգավուչները: Դրանք ուղղակի արտադրության մեջ են կազմակերպվում, վորանդ բանվորական ուշժ են պատրաստում:

Ֆարգավուչների աշակերտները գիտելիք ձեռք բերելով ու իրանց վորակավորումը բարձրացնելով՝ միեևուչն ժամանակ ել աշխատում են արտադրության մեջ: Գյուղական տնտեսության համար գյուղություն ունի գյուղատնտեսական աշակերտության դպրոցը:

Մեր ուսանողները միջին արհեստային կրթություն ստանում են ինդուստրիալ, գյուղատնտեսական, բժշկական, արհեստագրական-տնտեսական, կոոպերատիվ, տրանսպորտային ու գեղարվեստական տեխնիկական միջոցով: Յուրաքանչյուր տեխնիկում իր ճյուղի համաձայն մասնագետ է պատրաստում:

Բարձրագույն արհեստային կրթություն տալիս են բարձրագույն դպրոցները: Նրանց կից բանֆակ կա, վորի անելիքն է բանվորա-գյուղացիական չերիտասարդություն պատրաստել համալսարանի ու պոլիտեխնիկումի համար, վորպեսզի ավելի շատ բանվորների ու գյուղացիների չերեխաներ քաշվեն դեպի ուսանողություն կողմը: Թե այդ բանը վորքան լուրջ է դրված Ագրբեջանում, չերեքում է նրանից, վոր 1927—28 թվին բանֆակում սովորում էին 1298 հոգի:

Այս տարի բարձրագույն դպրոցներում ընդունված ուսանողության 73% -ը բանվորա-գյուղացիական տարր են. այն է՝ բանվոր 38,6% և գյուղացի՝ 15,5%:

Ագրբեջանի գյուղին ծառայություն մատուցանելը դուրացնելու համար՝ թյուրքիզացիայի և չեխարկվում բարձրագույն դպրոցը: Ագրբեջանում բարձրագույն կրթությունը թյուրքիզացիայի չեխարկելու կողմից ամեն տարի նվաճումներ են լինում, այն է՝ ավելանում է թյուրք ուսանողների տոկոսը, ուսումն անցնում թյուրքերեն լեզվով, և թյուրքերեն իմացող գիտական գոր-

**ՓԱՐՋԱՎՈՒՆ-
ԼՈՒՍԱՎՈՐՈՒ
ՎԱՆ ԱՇԽԱ-
ՏԱՆԲ**

ծիչներ պատրաստում: Բանվոր ու չքավոր գյուղացի ուսանողներն ապահովված են թոշակով: 1927—28 թվին թոշակավորների թիվը համալսարանում չեղել են 401 հոգի, պոլիտեխնիկումում՝ 402: Բացի դրանից՝ Սորհրդային Ռուսաստանի բարձրագույն դպրոցներն են ուղարկված 150 հոգի: Բոլոր թոշակավորների 39,8% -ը թյուրքեր են:

Քաղաքական աշխատանքը տարվում է 3 դժով.

- 1) Բանվորների ու գյուղացիների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը լիկվիդացիայի չեխարկելու ուղղությամբ.
- 2) Կոմունիստական կրթության գծով և 3) արտադրողական գծով:

Անհրաժեշտ է մատնանշել, վոր կանայք, մանավանդ գեղջկուհիները, առավել ևս թրքուհիները թույլ են քաշված դեպի անգրագիտության լիկվիդացիան և այդ բանի վրա մենք պետք է առանձին ուշադրություն դարձնենք:

Կոմունիստական կրթության գծով մենք ունենք քաղաքագիտության դպրոցներ ու խորհրդային-կուլտուրոցներ, վոր քաղաքագործիչներ ու կուսակցական պրոպագանդիստներ են պատրաստում:

Արտադրողական աշխատանքը զարգանում է գրագրա-նային, ակումբային ու դասախոսական-եկսկուրսիոն գործի, ինչպես և շարժական կինոների ու ռադիոների գծով:

Գյուղում առանձին նշանակություն ունեն խրճիթ-ընթերցարաններն ու գեղջկուհիների անկյունները, վորոնց աշխատանքը պետք է ավելի լայն ծավալել: Այդ ուղղությամբ մենք Լուս-ժողովմատի միջոցով մի ամբողջ շարք միջոցներ ենք ձեռք առել:

Ակումբներինց առանձին ուշադրության արժանի է Ալի Բալբանովի անվան կանանց ակումբը Բաղվում, վոր բազմակողմանի մեծ գործունեություն է տանում:

Այստեղ տեղին կլինի ուշադրություն դարձնել թյուրք կանաց շարքերում կուլտուրական հեղափոխություն կատարելու այն դժվարության վրա, վոր դարերով արմատացած ու թուրք կնոջ մեր ժառանգարար փակվածությունն և ներկայացնում: Կնոջ փակվածության ու ստրկության ամենացայտուն չերեքներինց մեկն է հանդիսանում չաղրան:

Չաղրան մեծ դժվարություններ է առաջացնում կանանց դեպի խորհրդային ու հասարակական աշխատանքի քաշելու, և առհասարակ կանանց շարքերում կուլտուրական աշխատանք կատարելու:

Ուստի կառավարությունը համապատասխան այն համառ պահանջների, վոր հասարակական կազմակերպություններն են ներկայացնում չաղրան վերցնելու վերաբերմամբ, վորոշել է վրձառական միջոցներ ձեռք առնել ստրկության այդ խաչատառի ֆնացորդը վերացնելու և ներկայումս նախադաստատական աշխատանք է կատարվում չաղրա ծածկելու արգելող՝ որենք հրատարակելու: Արդեն դրա առաջին քայլն է հանդիսանում այն կարգադրությունը, վորի համաձայն լուսավորության աշխատա-

**ԲԱՐՁՐԱ-
ԳՈՒՅՆ ԴԵՂ-
ՐՈՑՆԵՐ**

**ՉԱԴՐԱ
ՎԵՐՑՆԵԼԸ**



վորուհիներին ու աշակերտուհիները պետք է զեն ցցեն չա-
ղրան:

Ժողովրդական կրթութեան գործը մեզնում ընդարձակվում
է ու զարգանում. բայց չես, բնկերներ, կարծում եմ, վոր այդ
գործը կարելի է պատշաճ բարձրութեան վրա դնել միայն այն
ժամանակ, չերբ իրանք, աշխատավորները կհամակվեն այդ գոր-
ծի կարեւոր լինելու գիտակցութեամբ և կառավարութեանը կողմէն
դպրոցներ ու ուրիշ կուլտուր-կրթական հիմնարկութիւններ կա-
ռուցելու:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ ԺՈՂՈՐՐԴԱԿԱՆ ԱՌՈՂ- ՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Աղբրեջանում խորհրդային իշխանութիւնն հաստատելու մո-
մենտից, հենց իրա՝ բանվորա-գյուղացիական բնակչութեան ա-
մենամոտ աշակցութեամբ՝ կառավարութիւնը ձեռնարկել է բնակ-
չութեանը պլանաչափ բժշկա-սանիտարական ոգնութեան հաս-
ցնելու գործը կազմակերպել, ըստ վորում խորհրդային բժշկակա-
նութիւնը կառուցելու հիմքում դրված էր—«աշխատավորների
առողջութիւնը հենց իրանց, աշխատավորների գործն է»—լո-
զունդը:

Հենց առաջին ամիսները բուժակային և բժշկական կետերի
ցանցն է ծավալվում, վորը հետզհետե ավելի ու ավելի էր մե-
ծանում: Բուժակային, ֆելդշերական կետերը հետզհետե դառել են
բժշկական կետեր՝ բժշկական ավելի բարձր տեսակի ոգնութեամբ,
իսկ բժշկական մի շարք կետերում սկսել են դալրա հիվանդա-
նոցներ բացվել: Ներկայումս Աղբրեջանի գավառների վրեթե բո-
լոր դալրաները (փոքրիկ բացառութեամբ) իրանց բուժարաններն
ու բժշկական հիմնարկութիւններն ունին, վորտեղ մնայուն հի-
վանդներ են ընդունում: Բուժակային կամ բժշկական յուրա-
քանչուր կետ ձրիաբար դեղորայք է բաց թողնում չքավոր
բնակչութեանը: Հետագայում դալրաների դեղատոների ցանցն էլ
ավելի պետք է զարգանա:

Դրա հետ միասին չեն մոռացված արոտատեղիների քոչվոր-
ները, վորոնց քոչի ամբողջ ժամանակը բժշկական խմբեր են
տրվում, անհրաժեշտ ու ժամանակին ոգնութիւն հասցնելու հա-
մար: Գավառական քաղաքներում գավառական հիվանդանոցներ
են հիմնված, վորտեղ թե բանվորները և թե գյուղացիք համա-
պատասխան բժշկական ոգնութիւն են ստանում:

Բժշկական հատուկ ոգնութիւն ցույց տալու համար, և բը-
ժշկական տեսակետից դժվարին դեպքերում՝ տերրիտորիալ ա-
ռողջբաժինը հիվանդներին ուղարկում է Բազմի կենտրոնական
բժշկական հիմնարկութիւններն, ինչպես և մյուս հարեան հան-
րապետութիւնները:

Առողջօգնականութիւն կից վորոշ կենտրոնական հիմնարկու-
թիւններ են կազմակերպված, վորտեղ գյուղացիք կարող են այն
հատուկ ոգնութիւնն ստանալ, վորոնցով նրանք ապահովված
չեն: Այդպիսիներն են՝ կլինիքական, կաշվե-վնեւերուղիական,

ԺՈՂՈՐՐԴԱ-
ԿԱՆ ԱՌՈՂ-
ՋԱՊԱՀՈՒ-
ԹՅՈՒՆ

ՊՐՈՖԻԼԱԿ-
ՏԻԿԱ

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒ-
ԹՅԱՆ ՊԱՀ-
ՊԱՆՈՒ-
ԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱԲՆԱԿ
ՏԵՂԵՐԻ ԲԱ-
ՐԵԿԵՑՈՒ-
ԹՅՈՒՆ

ԱՂԲԻ ՀԻՎԱՆ-
ԴՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒԲԱԽՏ ՈՒ
ՎԵՆՀԻՎԱՆ-
ԴՈՒԹՅՈՒՆ

ՄԱԼՅԱՐԻԱ

հոգե-նեվրոլոգիական հիմնարկութիւնները, Առողջօգնականութիւն
վերաբուժական հիվանդանոցը, բորոտանոցը, և այլն: Դրանց հետ
միասին կա և մանրեաբանական ինստիտուտը, վորտեղ բոլոր
անհրաժեշտ շիջուկներն ու ներսրսկելու դեղերն են պատրաստ-
վում վարակիչ հիվանդութիւններից—սկարլատինից, դիֆտերի-
տից, ծաղիկից, խոլերայից, տիֆից և ուրիշ հիվանդութիւններից
պատվաստելու համար:

Վերջին տարիներս գտնված է, վոր ավելի հեշտ է հիվան-
դութեան առաջն առնել, քան թե բժշկել: Այդ պատճառով բժըշ-
կական կազմակերպութիւնների հետ միասին առանձին ուշա-
դրութիւն է դարձրել գուտ առաջն առնելու—պրոֆիլակտիկ
հիմնարկութիւններ կազմակերպելու վրա: Առողջօգնականութիւն
բժշկական գործիչներն ու նրա հատուկ հիմնարկութիւնները
բնակչութեան, աշակերտների, պատանիների, թոքախտով հի-
վանդների ու մշուսների աշխատանքի ու կենցաղի հետազոտու-
թիւնն են կատարում: Յերեխաների համար թե ամառվա և թե
մշտական տիպի մահճակալներով, կոնսուլտացիաներով մսուրներ
են կազմակերպվում, կանանց համար՝ մայրութիւն ու մանկու-
թիւն պահպանելու զանազան հիմնարկութիւններ:

Աղբրեջանի գավառներում չերեխաների ու պատանիների
առողջութիւնը պահպանելու համար հատուկ բժիշկներ կան, վո-
րոնք իրանց գլխավոր ուշադրութիւնը դարձնում են դպրոցա-
կան առողջապահութեան ու պիոներ-ատրլադների վրա, հետեւե-
լով, վոր այն շենքերն ու ամբողջ սարք ու կարգը, վորտեղ սո-
վորում են չերեխաներն ու աշխատում, միանգամայն հարմար
լինին: Ամառն ամեն տեղ առողջարար հրապարակներ են կազ-
մակերպվում, վորտեղ չերեխաները բժշկի հսկողութեամբ՝ իրանց
աշխատանքն են կատարում: Մեծ ուշադրութիւն է դարձնում
ֆիզկուլտուրայի հարցերին:

Մարդաբնակ տեղերի ընդհանուր բարեկեցութեանը հսկելու
համար առողջապահական հատուկ բժիշկներ կան, վորոնք իրա,
բնակչութեան մասնակցութեամբ՝ պետք է վերացնեն տրված տե-
ղի բոլոր առողջապահական թերութիւնները, հետեւն ջրամա-
տակարարմանը ու ընդհանուր առողջացմանը:

Այլի հիվանդութիւնների, ինչպես տրախոմայի դեմ պալ-
քարելու համար խմբեր են կազմակերպվում, մասնագետ բժիշկ-
ների գլխավորութեամբ:

Թոքախտի ու վնեւերական հիվանդութիւնների դեմ տար-
վող պալքարն ընդարձակվում է ամեն տարի: Հիվանդների կյան-
քի ու աշխատանքի պայմաններն են հետազոտվում ու միջոցներ
ձեռք առնվում այդ պայմանները բարելավելու համար:

Գրեթե ամբողջ Աղբրեջանի տերրիտորիան մալլարոտ է հա-
մարվում: Տեղ-տեղ շարունակ անմատչելի ճահիճներ ու ճահճա-
ցած հողամասեր են, վորտեղ ամենայն առատութեամբ մալլարյա
տարածող մոծակներն են ապրում ու բազմանում և վորտեղ
դրանց դեմ պալքար մղելը շատ դժվար է:

Առ այժմ փոքրաթիվ մալլարիական կալարանները հաջողու-
թեամբ են տանում իրանց աշխատանքը, հետզհետե, քայլ առ

քաղ չորացնվում են ճահիճները, կանգնած ջրերը, խինխիղա-
ցիալի և լենթարկվում բնակչությունը, և այլն, և այլն:

Դրա հետ միասին դեռ պետք է շատ դժվարություններ, նախապաշարմունքներ հաղթահարել, վորպեսզի կարելի լինի գյուղացիության ազատել այդ պատուհաններից: Դա հնարավոր կլինի միմիայն այն ժամանակ, չեք լիովին լիկվիդացիալի լեն-
թարկվի առողջապահական-սանիտարական անդրադարձությունը: Այդ նպատակով ամբողջ հանրապետությունում շատ մեծ ուշա-
դուրեցում է դարձրված առողջապահական-լուսավորական գործի վրա: Քաղաքներում առողջապահական լուսավորության տներ, գավառական կենտրոններում՝ առողջապահական անկյուններ են կազմակերպվում, դանադան պլակատներ են բաց թողնվում, ա-
ռողջապահական դատարաններ, ներկայացուցիչներ սարքվում, ա-
ռողջապահական կինո-նկարներ տրվում և այլն, և այլն:

Քաղաքային խորհրդներին, գաղապարդեմներին, գյուղխոր-
հուրդներին կից մենք հատուկ սանիտարական անկյուններ ու հանձնաժողովներ ենք կազմակերպել, վորտեղ բժշկական պերսո-
նալի հետ միասին և բանվորներին, հասարակական կազմակեր-
պություններին ու աշխատավոր գյուղացիության ներկայացու-
ցիչներն են ներս քաշվում: Բնակչությունն ինքը պետք է ան-
միջական կերպով ղեկավարե և այդ աշխատանքն ու դեպի ուղիղ
հունը մղե, ամեն կերպ տեղերում բժշկա-սանիտարական ցանցն
ամրապնդելով: Առանց աշխատավորներին ազդպիսի մասնակցու-
թյան մենք չենք կարողանա պետք չեղած հետևանքների հասնել:

Իհարկե, խորհրդայնացումից հետո անցած ժամանակամի-
ջոցում մենք Ադրբեջանի առողջապահության գործում ահագին
նվաճումներ ենք ունեցել, սակայն դեռ շատ աշխատանք պետք
է դնել ու հոգս տանել, վոր բոլոր գավառներն ապահովվին լավ
հիվանդանոցներով, ու ամբողջ բնակչությունը՝ համապատաս-
խան բժշկական ոգնությունով:

Հիվանդանոցային շինարարությունն արդեն ընդգրկել է
բոլոր գավառներն ու ավելի քան 20 գաղա-կենտրոններ: Կա-
ռավարությունը միջոցներ է ձեռք առնում գավառները լավ
պատրաստված մասնագետներով ապահովելու համար: Սակայն
բարեհաջող հետևանքների հասնելու համար՝ բնակչությունը
պետք է ինքնատուրքավորման միջոցով ոգնություն դա հիվան-
դանոցային շինարարության գործին՝ բարելավելով բժշկական
գործիչների կենսական պայմանները, մանկական մսուրները պա-
հելով և այլն:

Վերջում պետք է մատնանշել կուրորտների վերաբերմամբ
Առողջօդկումատի կողմից կատարված մեծ աշխատանքը: Մինչև
խորհրդայնացումը վոչ վոք չի մտածել աշխատավոր բնակչու-
թյունը կուրորտային ոգնություն հասցնել, իսկ ներկայումս կու-
րորտային ոգնությունը հավասար կերպով է առաջ գնում Առող-
ջապահության ժողովրդական կոմիսսարիատի բժշկական ու
առողջապահական-պրոֆիլակտիկ աշխատանքի հետ միասին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ տեսնենք թե ինչ է արված գյուղացիության հա-
մար արդյունաբերության կողմից:

Վորոշ մարդիկ դեռ բոլորովին լավ չեն հասկանում թե ար-
դյունաբերությունից ինչ ոգուտ ունի չեղիրագործ գյուղացին:
Նրանց թվում է, վոր չեք գործարան կամ ֆաբրիկ է շինվում,
ապա գլխավոր ոգուտն ստանում են քաղաքացի բանվորներն ու
ծառայողներն, իսկ գյուղացիք դրանից քիչ ոգուտ են տեսնում:

Իհարկե այդ կարծիքը շատ ու շատ սխալ է, գյուղացու ինչին
է հարկավոր ֆաբրիկան:

Առաջինը՝ գյուղացին շահագրգռված է արդյունաբերության
գարգացման գործով՝ ինչպես արդյունաբերական ապրանք գնող:
Գյուղացին իր տնտեսության մեջ չի կարող գոյացնել, մշակել այն
բոլորն, ինչ վոր իրան հարկավոր է: Գյուղացուն հարկավոր են՝
մանուֆակտուրա, լեքաթ, լեքրագործական մեքենաներ, հող
պարարտացնելու նյութեր: Այդ ապրանքները միայն խոշոր ար-
դյունաբերությունը կտա նրան:

Ինչ է արված մեզ մոտ Ադրբեջանում գյուղացուն արդյու-
նաբերական ապրանք տալու համար: Դեռ 5—6 տարի սրանից
առաջ, մենք միայն մի մանուֆակտուրայի ֆաբրիկ ունեցինք հնա-
ցած մեքենաներով, վորը բացի բլադից ուրիշ վոչինչ չեք դուրս
բերում, այն էլ շատ քիչ քանակությամբ, — ընդամենը 4 միլիոն
մետր: Դա նշանակում է, վոր չեթե մենք մանուֆակտուրա չը-
ստանալինք խորհրդային Միության ուրիշ տեղերից, ապա Ադր-
բեջանի լուրաքանչյուր բնակչին տարեկան միայն 2 մետր բլադ-
կտավ կրնանք: Վերջին տարիներս ֆաբրիկը նորոգված է, նոր
մեքենաներ են դրված այնտեղ և այս տարի նա պետք է տա
32 միլիոն մետր, այն էլ 25% եծան գնով, քան չեղել է 1923—
24 թվին:

Բացի այդ ֆաբրիկից՝ Դյանջալում սկսում է աշխատել ելի
մի նոր, մեծ ֆաբրիկ. և հետո էլ մոտավոր հինգ տարիների ըն-
թացքում նույն Դյանջալում մի ուրիշ ֆաբրիկ կկանգնեցնվի:
Հեռու չե այն ժամանակը (1932 թ.), չեք Ադրբեջանի մանու-
ֆակտուրային ֆաբրիկները կսկսեն տարեկան 110 միլիոն մետր
գործվածք տալ (42 մետր մի շնչին) և այն էլ վոչ թե մենակ
բլադ, այլ գլխավորապես ներկած, գունավոր ձոթեղեն: Այսպի-
սով մինչև 10 տարին Ադրբեջանը 25 անգամ ավելի մանուֆակ-
տուրա դուրս կբերի, քան առաջ (1923 թ.), և այն ժամանակ
մեր մանուֆակտուրան բավականություն կանի վոչ միայն Ադր-
բեջանին, այլ և դուրս կտարվին դեպի ուրիշ ռազմաներ, մեզ մոտ
չմշակվող, չգործվող տեսակների հետ փոխանակելու: Յեվ այս-
պես միմիայն մանուֆակտուրայի որինակով տեսնում ենք, թե
գյուղացիք վորքան են շահագրգռված արդյունաբերության դար-
գացումով:

Յերկրորդը՝ գյուղացին կարիք ունի արդյունաբերությունը, վորովհետև նա անհրաժեշտաբար պետք է ծախսե իր բամբակը, բոժոժը և գյուղատնտեսական մյուս մթերքները: Ինչքան շատ լինեն մանուֆակտուրայի, մետաքսի և այլ ֆաբրիկներն, այնքան ավելի կլինի դեպի գյուղացու արտադրած մթերքները լեղած պահանջը: Մենք արդեն ասացինք, վոր շուտով Ադրբեջանի մանուֆակտուրային ֆաբրիկները պետք է 25 անգամ ավելի մշակեն, քան 1923 թվին: Դա նշանակում է, վոր նրանք այդքան անգամ ել ավելի պետք է բամբակ առնեն գյուղացուց:

Այժմ տեսնենք, թե ինչ դրություն մեջ է մետաքսի բանը: Դուք գիտեք, վոր Ադրբեջանի շերամապահությունը զբաղված են մոտ 50 հազար գյուղացիական տնտեսություններ: Ներկայումս կառավարությունը ձեռք է առնում բոլոր միջոցները շերամապահությունը զարգացնելու, այդ մասին մենք արդեն խոսել ենք: Այժմ ի՞նչ է արվում, վորպեսզի շերամապահների ստացած բոժոժն ապավիլի—Հիմա Ադրբեջանում մետաքսի 6 գործարան կա և այս տարի ել վերջանում է մի նոր գործարանի կառուցումը, վորը մյուսներից ավելի մեծ կլինի և վորակով ավելի լավ ապրանք բաց կթողնի:

Այդ ամբողջ արդյունաբերությունը, այդ գործարանները վոչ միայն գնում են բոժոժի այն քանակությունը, վոր Ադրբեջանի գյուղացին է արտադրում այժմ, այլ և ապահովում են ավելի մեծ քանակությամբ բոժոժի սպառումը: Շերամապահությունը ներկայումս իր սպառման հաստատուն շուկան ունի:

Յուրջ տանք և մի ուրիշ արդյունաբերություն, վոր առանձնապես կարևոր է գյուղացիության համար: Շատ գավառներում, ինչպես որինակ Դուբայի, Զաքաթալայի, Լենքորանի գավառի գյուղացիները չեն կարող իրենց մրգերի ու կանաչեղեն բանջարեղենի ամբողջ բերքը ծախել, վորովհետև ճանապարհին փտում է (մանավանդ ամարային ու քնքույշ տեսակները): Այդ պատճառով ել բերքի մի մասը փչանում է: Վորպեսզի ամբողջ բերքը լիովին պահպանվի՝ այժմ շատ գավառներում պահածույի—կոնսերվի գործարաններ են շինվում: Գյուղացիք այդ գործարաններին կծախեն իրանց ամբողջ բերքն ու դրանով ել շատ կմեծացնեն իրանց լեկամուտը:

Վերջապես ցույց տանք, վոր գյուղացին արդյունաբերությունով շահագրգռված է դարձյալ մի ուրիշ կարևոր կողմից: Բնակչության թիվը ավելանում է. բոլորը չեն կարող գյուղում իրանց համար գործ գտնել. և ահա շատ կարևոր է, վոր քաղաքում արդյունաբերական ձեռնարկություններ լինեն, վորտեղ գյուղական բնակչության մի մասը կարողանար իր համար գործ գտնել: Ներկայումս պետական արդյունաբերությունում մոտ 50 հազար հոգի են աշխատում. իսկ 5 տարուց հետո կաշխատեն 70 հազար: Այսպիսով 70 հազար զվաճվորապես գյուղացի ընտանիքներ քաղաքում աշխատանք կստանան, վոր չեթե փողով հաշվենք, տարեկան 40 միլիոն ռուբլի կգանա:


Այս բոլոր որինակները ցույց են տալիս, թե գյուղացիության բարեկեցությունն ինչքան սերտ կերպով կապված է քաղաքային արդյունաբերության զարգացման հետ: Ուստի և ամեն դեպքին արդյունաբերության կերպով պաշտմի գիտակից գյուղացի պետք է ամենավճռական կերպով պաշտպանե այն քաղաքականությունը, վոր ներկայումս խորհրդային կառավարությունն է տանում, այն է՝ քաղաքում գոյություն ունեցող արդյունաբերական ձեռնարկություններն ընդարձակելու և նորերն ստեղծելու քաղաքականությունը: Արդյունաբերական արտադրանքի այդ զարգացման մեջ է կայանում և գյուղացիական տնտեսությունը բարձրացնելու աշխատանքի նախադրությունը:



907

MSI

Don U



ՀՀ Ազգային գրադարան



NL0206061

29.608